# ԹՅՈՒՐՔԱԼԵԶՈՒ ՑԵՂԵՐԻ ՎԱՂ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

ԱՅՎԱԶՅԱՆ Շ. Ս.

*Թյուրքալեզու ժողովուրդների կազմավորման գործընթացը և վաղ պատմության խնդիրները առ այսօր չեն կարող համարվել լուծված: Դրանք գիտական լուրջ ուսումնասիրությունների առարկա են՝ պայմանավորված առկա աղբյուրների բնույթով: Վերջիններս գերազանցապես ներկայացնում են այդ ժողովուրդների հետ տարբեր ժամանակներում առնչված հարևան երկրների պատմիչների և աշխարհագիրների ստեղծագործությունները, որտեղ հաճախ առկա է ընդհանրական տեղեկատվություն:*

*Բանն այն է, որ «թյուրք» տերմինը հարևանների կողմից տրված ցեղանուն է, և պարզ չէ, թե այդ աղբյուրների ստեղծման ժամանակներում այն ինչ իմաստ կարող էր ունենալ:*

*Թյուրքական ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար տեղեկություններ են պահպանվել չինական, արաբական, հայկական, բյուզանդական հեղինակների երկերում: Կարևոր աղբյուրներ են նաև այսպես կոչված ենիսեյաօրխոնյան արձանագրությունները, ինչպես նաև ժողովրդական բանահյուսության ոլորտը ներկայացնող ստեղծագործությունները:*

*Ներկայացնենք թյուրքալեզու ժողովուրդների վաղ պատմության վերաբերյալ առկա գրավոր աղբյուրների համառոտ տեսությունը:*

## Չինական պատմագրություն

*Հնագույն թյուրքալեզու ցեղերի մասին առաջին հիշատակությունները պահպանվել են հին չինական տարեգրություններում: Դրանց շարքում առանձնահատուկ նշանակություն ունի Հան թագավորության շրջանի պատմիչ Սիմա Ցյանի (մ.թ.ա. 140-90-ական թթ.) ստեղծագործությունը՝ «Շի Ցզի» (Պատմական գրվածքներ)[1]: Սիմա Ցյանի գրքում հին թյուրքական ցեղերի մասին տեղեկությունները եզակի են և արժանահավատ, քանի որ հեղինակը, լինելով արքունի գրագիր, ի պաշտոնե լավ տեղեկացված էր կայսրության հարևան ժողովուրդների մասին:*

*Սիմա Ցյանն իր ստեղծագործության մեջ կիրառում է սյուննու, սյունյուն, հուննու (խուննու) ցեղանունները, իսկ մ.թ.ա. III-II դդ. պատմության ժամանակահատվածը ներկայացնելիս հյուսիսի ցեղամիություններից ոմանց կոչում է սյուննու անունով:*

*Այս անվանումները թուրք և թուրքամետ հեղինակներին, ինչպես օրինակ՝ Հ. Ն. Օրքունին և ֆրանսիացի թյուրքագետ Ժ. Պ. Ռոուքսին հիմք են տվել ենթադրելու, որ հոնական ցեղերի պատմությունն սկսվում է դեռևս մ.թ.ա.*

---

[1] **Сыма Цянь.** *Исторические записки (Ши Цзи) (XXXII,8), т. VIII, М., 2002.*

XXIII դարից, նրանք հակված են հուանգ-նու, հուններ, խուններ ցեղանուններով հայտնի քոչվոր ցեղերին դեռ այդ ժամանակների համար տալ արդեն ձևավորված էթնոսի բնորոշում՝ իրեն հատուկ լեզվական և մշակութային ընդհանրությունների հետ[2]:

Սակայն միայն վերոհիշյալ ցեղանվան հիման վրա կառուցված այս հակագիտական տեսակետը չի ընդունվում մասնագետների մեծամասնության կողմից: Դրան հակառակ՝ գերակշռում է շատ ավելի իրատեսական մի կարծիք, ըստ որի, այդ ցեղանունները պետք չէ կապել հոների և առհասարակ տասնյակ դարեր հետո ի հայտ եկած թյուրքերի հետ, քանի որ դրանք ունեցել են հեգնական, բացասական նշանակություն, որով բնութագրվել են հնագույն ժամանակներում չինական իշխանությունների կողքին ապրող բարբարոս համարվող ցեղերը[3]:

Սիմա Ցյանի վերաբերմունքը հունների նկատմամբ «Շի Ցզիում» փոխվում է Հոնական ցեղային միությունը և նրա հզոր առաջնորդներին ներկայացնելիս: Հոներն այլևս անջատ հանդես եկող խոցելի ցեղեր չեն: Հոնական ցեղային միության առաջնորդ Մառդուն ցեղապետի մասին Սիմա Ցյանը պատմում է իր ստեղծագործության 110-րդ գլխում, որը կոչվում է «Լե չժուան» (Կյանքի նկարագրություն)[4]:

## Հունահռոմեական աղբյուրներ

Հույն և հռոմեացի հեղինակների աշխատություններում նույնպես կան կարևոր տեղեկություններ Փոքր Ասիայի, Հյուսիսային Կովկասի և Կենտրոնական Ասիայի աշխարհագրության և այդ տարածքներում ապրող ժողովուրդների ու ցեղերի պատմության մասին: Դրանց շարքում կարևոր տեղ ունի Հեկատեոս Միլեթացու (մ.թ.ա. 540-480 թթ.) «Աշխարհագրությունը», որից հետագայում օգտվել են շատ հեղինակներ՝ Հերոդոտոսը, Ստրաբոնը, Ստեփանոս Բյուզանդացին և այլք:

Պատմաժողովրդագրական հետազոտությունների համար կարևորագույն աղբյուր է Ստեփանոս Բյուզանդացու «Էթնիկա» ստեղծագործությունը: Հեղինակը տեղեկություններ է հաղորդում հույներին հայտնի բոլոր ցեղերի ու ժողովուրդների մասին[5]:

Բյուզանդական աղբյուրներում կարևոր տեղեկություններ կան դեպի Եվրոպա քոչվոր հոների ավերիչ արշավանքների և նրանց առաջնորդ Աթիլլայի մասին: Հոների արշավանքները նկարագրում է բյուզանդացի պատմիչ Պրիսկուս Պանիացին: Նա եղել է արևելահռոմեական կայսր Թեոդորոս II-ի՝ Աթիլլայի մոտ ուղարկված պատվիրակության կազմում, հետագայում

---

[2] **Orkun H. N.** *Türk Tarihi, II Bölüm, Ankara , 1946, s. 39-40.*

[3] **Бернштам А. Н.** *Очерк истории гуннов, Л., 1951, с. 55.*

[4] **Сыма Цянь.,** *նշվ. աշխ., էջ 440:*

[5] **Гаркавец Н.** *Великая степь в античных и византийских источниках, Алматы, 2005, с. 442-445.*

*հեղինակելով «Բյուզանդական պատմություն» աշխատությունը, որը բաղկացած է ութ գրքից: Մեզ է հասել նրա ստեղծագործությունից «Գոթական պատմություն» գիրքը, որում հանգամանորեն ներկայացված են Աթիլլայի և Բյուզանդիայի միջև հարաբերությունները 433-474 թթ.[6]:*

**Հայկական աղբյուրներ**

*Հայ պատմիչներից շատերի երկերում պահպանվել են տեղեկություններ Կենտրոնական Ասիայի տեղանունների, այնտեղից Կովկաս և Փոքր Ասիա ներթափանցած ցեղերի, ներառյալ՝ թյուրքալեզու ժողովուրդների մասին:*

*Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ հանդիպում ենք հիշատակություններ «Հոնաց երկրի[7]« մասին:*

*Մովսես Կաղանկատվացին «Աղվանից աշխարհի պատմություն» երկի Թ գլխում («Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց և պէսպէս անցից տիեզերահեծ տագնապին, որ եղեւ աշխարհաց») պատմում է Վիրքի Հերակլ արքայի հրամանով այժմյան Կասպից ծովի (տեքստում՝ Արեւմտյան ծովի) հյուսիսային ափերին բնակվող խազարների՝ պարսից Խոսրով արքայի դեմ արշավանքի մասին[8]:*

*Հետագայում կենտրոնաասիական ցեղերի մասին տեղեկություններ են հաղորդում մի շարք այլ հայ պատմիչներ ևս: Թովմա Արծրունու «Պատմութիւն Տանն Արծրունեաց» երկասիրության մեջ կան հիշատակություններ Կենտրոնական Ասիայի քուշանների և այդ տարածաշրջանի տեղանունների մասին: Հարկ է նշել, որ հայ և հունահռոմեական պատմագրության էջերում վերը հիշատակված ժամանակահատվածներում «թյուրք» կամ «օղուզ» ցեղանունը չի օգտագործվել:*

*XI դ. հայ պատմագիր Արիստակես Լաստիվերցու «Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերցիոյ» երկում ներկայացվում են թյուրքալեզու ցեղերի՝ Հայաստան ներխուժման մասին դրվագները: Հեղինակը գրում է. «Ի սոյն ամս բացաւ դուռն բարկութեան յերկնից՝ ի վերայ աշխարհիս մերոյ. և շարժեալ զորք բազումք՝ ի Թուրքաստանէ, որոց երիվարք արագունք իբրեւ զարծուիս, և սմբակք նոցա իբրեւ զվէմս հաստատունք»[9]:*

*Հայ պատմագրության մեջ Լաստիվերցին առաջին հեղինակներից է, որ օգտագործում է «Թուրքաստան» եզրույթը, որը ենթադրում է լեզվական և ռասայական ընդհանուր հատկանիշներով միավորված որոշ թյուրքալեզու ցեղերի առկայություն, որոնք, Կենտրոնական Ասիայում մի քանի դարերի ընթացքում ժողովրդակազմական բարդ գործընթացներ անցնելով, Կասպից ծովի հարավային շրջաններով ներխուժում են Մերձավոր Արևելք: Այսօր*

---

[6] *Նույն տեղում, էջ 446:*

[7] **Մովսես Խորենացի,** *Հայոց Պատմություն, Ե., 1990, էջ 149 (Տրդատի քաջագործությունները Աղվանքում տեղի ունեցած պատերազմի ժամանակ, երբ մեջքից կես արավ բասիլների թագավորին):*

[8] **Թովմա Արծրունի եւ Անանուն,** *Պատմութիւն Տանն Արծրունեաց, Ե., 1958:*

[9] *Պատմութիւն* **Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ,** *Թիֆլիս, 1912, էջ 65:*

*պատմագիտական գրականության մեջ նրանց տրվում է «օղուզաթուրքմենական» անվանումը:*

## Ենիսեյաօրխոնյան արձանագրություններ

*Թյուրքալեզու ժողովուրդների ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունեն ենիսեյաօրխոնյան արձանագրությունները, որոնք թվագրվում են մ.թ. V-VIIIդդ.[10]:*

*Արձանագրությունների թիվն անցնում է ութսունից, սակայն դրանց մեծ մասը որևէ պատմական անձի կամ իրադարձության մասին հստակ տեղեկություն չի հաղորդում: Արձանագրությունների տեքստերը հիմնականում առանձին նախադասություններ են, անձնանուններ և արևելյան օրացույցի տարեթվեր:*

*Պատմագիտական և լեզվաբանական հետազոտությունների համար առավել կարևոր նյութեր են պահպանել հատկապես դրանցից հինգը, որոնք համեմատաբար ծավալուն արձանագրություններ են: Դրանցից են Թյուրքական երկրորդ խանության գոյության ժամանակաշրջանում (մ.թ. 684-740 թթ.) գրված Մոգիլյան խանի արձանագրությունները: Ի տարբերություն այլ արձանագրությունների՝ նրանք ավելի շատ պատմական տեղեկություններ են հաղորդում խանության և նրա կազմի մեջ մտնող տարբեր ցեղային միությունների հարաբերությունների մասին:*

## Արաբական աղբյուրներ

*Արաբ պատմագիրների և աշխարհագիրների ստեղծագործություններում (հատկապես IX դարից սկսած) հիշատակվում են թյուրքախոս ցեղերը՝ հիմնականում ընդհանուր «թյուրք» ցեղանվամբ:*

*Թյուրքերը հիշատակվում են Աբու Ուսման Ամր բ. Բահր ալ Ջահիզի (մահացել է 863 թ.) «Քիթաբ ալ բայան վա-թ թաբյին»-ի «Նամակ ալ Ֆաթհի բ. Հաքանին թյուրքերի և խալիֆական զորքի այլ արժանիքների մասին» հատվածում, որը գրվել է 833-842 թթ. ընթացքում[11]: Հեղինակը պատմում է Աբբասյանների բանակի կազմում հանդես եկած թյուրքալեզու ցեղերի զորամիավորումների մասին՝ համարելով նրանց և արաբներին հավատի եղբայրներ, և նկարագրում թյուրքերի մարտական առավելությունները, հանդերձանքը և սովորույթները:*

*Իբն ալ Ֆակիհ ալ Համադանիի «Ախբար ալ-Բուլդան» («Տեղեկություններ երկրների մասին»)ստեղծագործությունը, որը գրվել է մոտավորապես մ.թ. 903 թ., մեզ հասել է հատվածաբար: Հատկապես մեծ նշանակություն ունեցավ հեղինակի աշխատության մեշխեդական ձեռագրի*

---

[10] Малов С. Е. *Памятники древнетюркской письменности Монголии и Киргизии, М.-Л., 1959.*

[11] *Арабские источники о тюрках в раннее средневековье, Баку, 1993, с. 33.*

*հայտնաբերումը: Այստեղ «թյուրքեր» հիմնականում կոչվում են դոքուզգուզերը՝ ույղուրական ծագման ցեղերը*[12]*:*

*Համադանին գրում է. «Թյուրքերի երկիրը թուգուզգուզերն են, նրանց երկիրն ամենամեծն է, սահմանակից է Չինաստանին և Տիբեթին, կարլուկները, կիմակները, գուզերը, ջիգիլները, պեչենեգները, բազքիլները, ազքիշիները, ղրփչաղները և ղրղրղզները, գտնվում են այս կողմում»: «Նրանց մեջ կան քոչվորներ, ...և այդ մարդիկ չեն ենթարկվում ոչ ոքի, բացի իրենց միջի մարդուց: Պատահում է, որ վերցնում են կանանց տեղի բնակչությունից և նրանց երեխաներին, որոնց դարձնում են իրենց ծառաներ՝ իբրև թե նրանք ըստ օրենքի են վերցրել նրանց և համաձայնություն ունեն»*[13]*:*

*Հաջորդ հեղինակը Աբու ալ Ալա Մուհամմեդ Ալի բ. Ալ-Խասուլն է, որն ապրել է Ղազնիների ժամանակաշրջանում, եղել է պալատական գրիչ (մահացել է 1058 թ.): Հայտնի է նրա՝ «Գիրք թյուրքերի՝ մյուս զինվորներից առավել լինելու մասին...» հատվածը թյուրքերի մասին, որը հիշատակվում է Հաջի Խալիֆի «Քաշֆ ալ զունուն»-ի մեջ*[14]*:*

*Արաբ հեղինակների հիշատակությունները թյուրքախոս ցեղերի մասին կարևոր են այն առումով, որ նրանց երկերում, բացի ներկայացվող տեղեկատվությունից, բազմաթիվ ցեղեր սկսում են կոչվել մեկ ընդհանուր՝ «թյուրք» ցեղանվամբ: Ճիշտ է, որոշ դեպքերում հիշատակվում են նաև այլ ցեղանուններ, ինչպես «թուգուզգուզերը», այսինքն՝ ույղուրները, այնուամենայնիվ, նրանք բոլորը ներկայացվում են իբրև «թյուրքեր»:*

**Մահմուդ Կաշգարիի "Divani Lügatit-Türk"-ը**

*Թյուրքալեզու ժողովուրդների պատմության վերաբերյալ առաջին համապարփակ ստեղծագործությունը, որն ընդարձակ տեղեկություններ է հաղորդում թյուրքական բարբառների, հոգևոր մշակույթի և նրանց բնակության վայրերի մասին, Մահմուդ Կաշգարիի "Divani Lغgat-it-Tغrk"-ն է («Թյուրքական բարբառների դիվան»):*

*Մահմուդ Կաշգարի իբն Հուսեյն իբն Մուհամմադը "Divani Lغgat-it-Tغrk"-ը գրել է մոտավորապես 1072 թ., որում ներկայացված են թյուրքական լեզուների բարբառները, օղուզական ցեղերը և թյուրքալեզու ցեղերի տարածման բանահյուսական նյութ*[15]*:*

*Ինչպես տեսնում ենք, արաբական պատմագրության էջերում միայն IX դարից է ընկալելի ընդհանուր թյուրք անվանումը, որը տրվում է Կենտրոնական Ասիայի թյուրքախոս բնակչությանը՝ բնութագրելով հատկապես նրանց լեզվական հատկանիշները: Թյուրքական աշխարհի լեզվական միասնության փաստը*

---

[12] *Նույն տեղում, էջ 37:*

[13] *Նույն տեղում, էջ 41-42, 52:*

[14] *Նույն տեղում, էջ 38:*

[15] **Kasgarli Mahmud.** *Divan-ü Lügatit Türk, 2005, s. 11. Կաշգարին մասնավորապես գրում է. □Թյուրքերը քսան ցեղ են: Նրանցից յուրաքանչյուրը սերում է Նոյի որդի Հաբեթի որդի Թյուրքից: Յուրաքանչյուր ցեղ բաժանվում է թևերի: Ես միայն մեծ ցեղերի անունները կարող եմ ասել, փոքրերինը՝ ոչ…□:*

*պարզորոշ ցույց է տալիս նաև Մահմուդ Կաշգարին: Նա նկարագրում է առանձին ցեղանուններ կրող թյուրքախոս ցեղերի՝ դրանք համարելով «թյուրքական»:*

**ИСТОЧНИКИ ПО ИЗУЧЕНИЮ
РАННЕЙ ИСТОРИИ ТЮРКОЯЗЫЧНЫХ ПЛЕМЕН**

**АЙВВАЗЯН Ш. С.**

Резюме

Сведения по истории тюркоязычных народов можно почерпнуть из греко-римских, армянских, арабских и других источников. Сочинения таких авторов, как Гекатей Милетийский, Страбон, Геродот, М. Хоренаци, М. Дасхуранци, А. Ластиверци проливают свет на ранний период истории тюркоязычных народов.

Большим подспорьем в изучении рассматриваемого вопроса служат сочинения некоторых средневековых арабских авторов, таких как Аль Хамадани, Ибн Фадлан, Бахр-эль-Джахиз. Орхонские древнетюркские памятники являются первыми непосредственными источниками по изучению истории тюркских племен.

**RESEARCH INTO THE SOURCES OF THE EARLY
HISTORY OF TURKIC SPEAKING TRIBES**

**SH. AIVAZYAN**

Abstract

When studying any problem related to Turkic speaking peoples' origins, culture, or history, we should use different sources, where we can find any direct or indirect information about them. There are many written Greek, Roman, Armenian, Arabic, and other sources that inform us about Central Asia, Far, and Middle East and their inhabitants from ancient times until now.

The works by such authors as Hecateus, Strabo, Herodotus, the Armenian authors M. Khorenatsi, M. Daskhurantsi, A.Lastivertsi and others are very important for the Turkic speaking peoples' early history.

There were also several medieval Arab authors like Al Hamadani, Ibn Fadlan, Bahr al Jahiz, who provide us with much important information about the Turkic tribes of the Middle Ages.

The Yenisei-Orchon inscriptions are the first direct sources for the study of the Turkic tribes, written in old Turkic language. The first author of Turkish origins – Mahmud Kashgari's "Divan-u Lugat it Turk" is also an important source of scientific research.